Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4135

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՐՔՍԻԶՄԻ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

(Արտատպություն «Խ. Հ.»-ի 1931 թ. դեկտ. 23-ի № 298-ից)

3К7
Մ-40

ԵՐԵՎԱՆ 1931

26 JUN 2013
4135

Պետհրատի տպարան
Պատվեր № 6533
Տիրաժ 400

01 JUL 2005
1 DEC 2009
3K7
Մ-40
1107
33654

# ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻՆ ԿԻՑ ՀՍԽՀ ՄԱՐՔՍԻԶՄԻ–ԼԵՆԻՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ 1931 ԹՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

*Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ՎՈՐՈՇՈՒՄ Ե՝*

1. *Կազմակերպել ՀՍԽՀ Կենտգործկոմին կից ՀՍԽՀ Մարքսիզմի–Լենինիզմի Ինստիտուտ։*

2. *Հաստատել այդ Ինստիտուտի ներքոհիշյալ կանոնադրությունը.*

3. *Միջնորդություն հարուցել Անդրկենտգործկոմի առաջ կանոնադրության 23 և 24 հ. հ. նախատեսված Ինստիտուտի հատուկ իրավունքների մասին։*

4. *Կենտգործկոմին կից ՀՍԽՀ Մարքսիզմի–Լենինիզմի Ինստիտուտ հիմնելու հետեվանքով վերացնել Ժողկոմխորհի 1930 թ. նոյեմբերի*

1-ի և դեկտեմբերի 10-ի «Գիտությունների Ինստիտուտ հիմնելու ու նրա կանոնադրությունը հաստատելու» և «Գիտությունների Ինստիտուտի առաջին կազմի և նրա նախագահության մասին» վորոշումները։

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՐՔՍԻԶՄԻ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. *Մարքսիզմի-Լենինիզմի Ինստիտուտը Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բարձրագույն գիտա-հետազոտական հիմնարկությունն է։*

2. *Մարքսիզմի-Լենինիզմի Ինստիտուտը հիմնվում է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին առընթեր և գտնվում է նրա անմիջական հսկողության տակ։ Իր աշխատանքների ծրագրերն ու հաշվետվությունները Ինստիտուտը ներկայացնում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությանը ի հաստատություն։*

3. *Մարքսիզմի-Լենինիզմի Ինստիտուտի խնդիրներն են՝*

*ա) մարքսիստական և լենինյան աշխարհայացքին յենթարկել իդեոլոգիական ամբողջ*



*ֆրոնտը գիտության բոլոր բնագավառներում, անողոք պայքար մղել հակամարքսիստական և հակալենինյան ուղղությունների դեմ, պայքարել մարքսիզմի և լենինիզմի ամեն տեսակի աղավաղումների դեմ.*

*բ) մշակել սոցիալիստական շինարարության գործնական պրոբլեմները և պատրաստել նրա համար բարձրորակ մասնագետների կոմունիստական կադրեր.*

*գ) իրագործել ՀՍԽՀ սահմաններում բովանդակ գիտական աշխատանքի գիտական-մեթոդոլոգիական միասնական ղեկավարությունը.*

*դ) ուսումնասիրել ՀՍԽՀ-ի և Անդրկովկասի բնական-արտադրողական ուժերը.*

*ե) ուսումնասիրել ՀՍԽՀ ժողովրդական տնտեսության սոցիալիստական զարգացման վերաբերյալ բոլոր հարցերը (արդյունաբերության և գյուղատնտեսության վերակառուցում, մասնագիտացում, շրջանացում և այլն)։*

4. *Վերոհիշյալ նպատակներն իրագործելու համար Ինստիտուտը՝*

*ա) Ղեկավարում է գիտության բոլոր բնագավառների համար կադրեր պատրաստելու գործը.*

բ) մշակում է ասպիրանտների աշխատանքի միասնական պլանը և կենտրոնացնում է նրանց իդեոլոգիապես պատրաստելու գործը.

գ) հրատարակում է պարբերական հանդեսներով և առանձին գրքերով գիտական բնույթի ուսումնասիրություններ.

դ) հրավիրում է համապատասխան խորհրդակցություններ, կոնֆերանսներ, համագումարներ. կազմակերպում է հրապարակական գիտական ժողովներ, դիսպուտներ և այլն, մասնակցում է Խորհրդային Միության և արտասահմանյան կոնֆերանսներին.

ե) գիտական խորհրդատվության և գիտական ուժեր մատակարարելու և այլ միջոցներով օժանդակում է զանազան հիմնարկների աշխատանքներին։

զ) սերտ կապ է հաստատում Համամիութենական Կոմունիստական Ակադեմիայի և նրա բոլոր գիտական հիմնարկությունների հետ.

## 2. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5. Ինստիտուտը բաղկացած է հետևյալ սեկցիաներից՝

ա) Մարքսիզմ-լենինիզմի փիլիսոփայության սեկցիա.

բ) Տնտեսական գիտությունների սեկցիա.

գ) Բնական գիտությունների սեկցիա.



դ) Պատմական գիտությունների սեկցիա.

ե) Գրականության և արվեստի սեկցիա.

զ) Մարքսիստական մանկաբանության և մանկավարժության սեկցիա։

6. Ինստիտուտն իր ընթացիկ աշխատանքները կատարում է հիշյալ սեկցիաների միջոցով։ Ինստիտուտի զարգացման և նրա աշխատանքների ծավալման դեպքում թույլատրվում է ավելացնել սեկցիաների թիվը։ Սեկցիաների թիվը ավելացնելու նախագիծն ամեն մի առանձին դեպքում Ինստիտուտի վարչությունը ներկայացնում է ՀՍԽՀ Կենտգործկոմին ի հաստատություն։

## 3. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱԶՄԸ

7. Մարքսիզմի-Լենինիզմի Ինստիտուտը կազմված է իսկական անդամներից և ունի գիտական աշխատակիցներ։

Գիտական աշխատակիցներին, հարկ եղած դեպքում, առաջադրում են սեկցիաները և հաստատում է Ինստիտուտի վարչությունը։

8. Ինստիտուտի իսկական անդամ կարող է լինել Խորհրդային Միության ամեն մի քաղաքացի, եթե նա ընդունում է մարքս-լենինյան որթոդոքսալ փիլոսոփիան, ունի մարքս-լենինյան ուղղության լուրջ աշխատություններ կամ թե սոցիալիստական շինարարության և մարքս-լենինյան աշխարհա-

յացքի պրոպագանդայի ասպարեզում մատուցել է հատուկ ծառայություններ։

9. Ինստիտուտի իսկական անդամների սկզբնական կազմը հաստատվում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության կողմից։

Իսկական անդամների թիվը սահմանափակված չէ. նոր անդամների թեկնածությունն առաջարկում է համապատասխան սեկցիան. առաջարկված թեկնածուներին Ինստիտուտի վարչությունը ներկայացնում է իսկական անդամների ընդհանուր ժողովի ընտրությանը. Թեկնածուն ընտրված է համարվում, յեթե ընտրությունների ժամանակ շահում է ձայների մեծամասնություն։

10. Ինստիտուտն ունի ասպիրանտներ, վորոնց հրավիրումն ու աշխատանքը նախատեսվում են ասպիրանտների վերաբերյալ հատուկ կանոնադրությամբ։

11. Այն դեպքերում, յերբ վորևե անդամի գործունեյությունը չի համապատասխանում Ինստիտուտի նպատակներին, ապա վարչության առաջարկությամբ ընդհանուր ժողովն ազատում է նրան անդամությունից։

## 4. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

12. Անդամների ընդհանուր ժողովը հրավիրում է Ինստիտուտի վարչությունը, իսկ



սեկցիաների նիստերը վարչության համաձայնությամբ հրավիրում են սեկցիաների վարիչները։ Անդամների ընդհանուր ժողովը հրավիրվում է չորս ամիսը մեկ անգամ, սեկցիաների նիստերը՝ ամիսը մեկ անգամ, իսկ հանդիսավոր ժողովը՝ տարին մեկ անգամ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Ժողովներում հարցերը վճռվում են ձայների պարզ մեծամասնությամբ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Բացառիկ դեպքերում Ինստիտուտի վարչությունը հրավիրում է արտակարգ ժողով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— Գիտական բնույթի ժողովները տեղի յեն ունենում դռնբաց։

13. Ինստիտուտի վարչությունը կազմված է՝ դիրեկտորից, նրա յերկու տեղակալից, գիտական քարտուղարից և հինգ անդամից։ Ինստիտուտի վարչությունն իրավունք ունի իր նիստերին հրավիրել սեկցիաների վարիչներին խորհրդակցական ձայնի իրավունքով։

14. Ինստիտուտի վարչությունն ընտրվում է Ինստիտուտի իսկական անդամների ընդհանուր ժողովում յերկու տարի ժամանակով և հաստատվում է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության կողմից։

15. Դիրեկտորը Ինստիտուտի գլխավոր ղե-

կավարն է և նրա բոլոր աշխատանքների պատասխանատուն։ Դիրեկտորի հիվանդության կամ բացակայության դեպքում նրա բոլոր պարտականությունները կատարում է տեղակալներից մեկը։

16. Ինչպես գիտական, այնպես և գիտական-վարչական ղեկավարության աշխատանքները դիրեկտորի տեղակալները բաշխում են իրենց միջև։

17. Ինստիտուտի գիտական քարտուղարը վարում է աշխատանքի ամբողջ գիտական մասը, կազմում է ասպիրանտների աշխատանքի պլանները, վարում է հրատարակչական մասը։ Նա է վարում հիմնարկությունների և առանձին անհատների հետ գիտական բնույթի գրագրությունը։

18. Ինստիտուտի վարկերը տնօրինում է վարչությունը։

19. Սեկցիաների վարիչներին ընտրում է սեկցիաների անդամների ընդհանուր ժողովը և հաստատում է Ինստիտուտի վարչությունը։

## 5. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

20. Ինստիտուտի վարչա-տնտեսական գործերը և դիվանը վարում է գործերի կառավարիչը, վարչության անմիջական ղեկավարությամբ նա տնօրինում է Ինստիտուտի վար-



կերը։ Գործերի կառավարչին նշանակում է վարչությունը։ Հաշվապահին, գանձապահին և տեխնիկական աշխատակիցներին նշանակում է գործերի կառավարչությունը։

## 6. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

21. Ինստիտուտի միջոցները կազմվում են՝ ա) պետական բյուջեյով նախատեսված գումարներից և բ) հատուկ գումարներից։

22. Ինստիտուտի նախահաշիվը հաստատում է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն։ Վարկերը բացվում են Ինստիտուտի անունով։

## 7. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

23. Ինստիտուտն իրավունք ունի Խորհրդային Միության սահմաններում անվճար ուղարկել և ստանալ մինչև 20 կգ. ծանրության ամեն կարգի փոստային ծրարներ։

24. Արտասահմանում Ինստիտուտի ձեռք բերած գրքերը և գիտական գործիքները ազատվում են մաքսից։ Խորհրդային Միության մեջ լույս տեսած բոլոր գրքերից Ինստիտուտը անվճար ստանում է մեկական օրինակ։

25. Ինստիտուտն ունի սեփական կնիք ՀՍԽՀ պետնիշով և իր անունով։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահ՝ Ա. ԱՆԱՆՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

## ՀՍԽՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՐՔՍԻԶՄԻ–ԼԵՆԻՆԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1931 թ. դեկտեմբերի 6.

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը վորոշում ե՝

1931 թ. դեկտեմբերի 6-ին հաստատված ՀՍԽՀ Կենտգործկոմին կից ՀՍԽՀ Մարքսիզմի–Լենինիզմի Ինստիտուտի կանոնադրության 8-րդ կետի հիման վրա հաստատել Ինստիտուտի իսկական անդամների հետևյալ կազմը.

### 1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱ

Անդամներ

Ակոպով, Դզնունի Դանել, Զորյան Հակոբ, Յումարյան, Կարինյան Արտաշես, Հովհաննիսյան Աբգար, Ղազարյան Կարո, Մելիքյան



Արշավիր, Մարկոսյան Սուրեն. Մաշկով, Յեկավյան Հրանտ, Ներսիսյան Ստեփան, Զոբար Յեղիա։

### 2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՍԵԿՑԻԱ

Անդամներ

Աբով Գևորգ, Գյուլիքեվխյան Հայկ, Դաբաղյան Նորայր, Հախումյան Աշոտ, Մկրտչյան Հ., Մազմանյան Միշա, Մելիքսեթյան Սարգիս, Մակինցյան Պողոս, Չարենց Յեղիշե, Սարգսյան Խորեն, Սարգոյան Արա, Սիմոնյան Դրաստամատ, Վանանդեցի Գուրգեն, Քոչար Գ.։

### 3. ԲՆԱԳԻՏԱԿԱՆ–ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

Անդամներ

Արովյան Սարգիս, Արեշյան Գրիգոր, Բաղդասարյան Ստեփան, Գաբրիելյան Ռուբեն, Հովհաննիսյան Հակոբ, Հասրաթյան Եզրաս, Ղևոնդյան, Մասինո Բորիս, Մուշեղյան Տիգրան, Յուղրաղյան Սիմեոն, Յերիցյան Խորեն, Փիրումյան, Քալանթարյան Գասպար։

### 4. ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՅԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ ՍԵԿՑԻԱ

Անդամներ

Ասլանյան Հայկազ, Արիսյան Լևոն, Բզնունի Արտո, Գյուլիքեխվյան Հայկ, Գաբրիելյան

Հենրի, Մելիքյան Արշավիր, Մարտիրոսյան Վահան:

## 5. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ–ՄԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

Անդամներ:

*Աստվածատրյան Վերգուշ, Դավթյան Սեբիկ, Հայրապետյան Սահակ, Մուշեղյան Տիգրան, Սանթրոսյան Մուշեղ, Սիմակ:*

## 6. ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

Անդամներ

*Աղոյան Աշո, Ամիրխանյան Սեդրակ, Աշեյան Գ. Արզումանյան Անուշավան, Աղասյան Հայկ, Գուլոյան Աբրահամ, Դավթյան Վ., Զուրաբյան Ս., Ծատուրյան, Կասյան Սարգիս, Կոստանյան Վռամ, Հովսեփյան Խորեն, Հովսեփյան Արմենակ, Մակինց Նշան, Մալխասյան Վ., Միքայելյան Սուրեն, Յեղխափարյան Արտո, Յեղանյան Միշա, Յեսայան Գարեգին, Սիմոնյան Դրաստամատ, Սիլանյան Հայկ, Վյուզո:*

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
նախագահ՝ Ս. ԱՆԱՆՅԱՆ
Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ:



ՀՀ Ազգային գրադարան
NL0184098